Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը

4
ԹԵՄԱ

Դաս 33 Աշխարհաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում: Հայկական պետությունը դրածո արքաների օրոք

Գիտեք, որ...

- *Մեծ Հայքի տարածքը I դարի սկզբներին կազմում էր 310 հազար քառ. կմ: Իր տարածքով շարունակում էր մնալ հին աշխարհի երրորդ մեծ պետությունը:*

- *1 թվականից մինչև 51 թ. հայոց գահը գբաղեցրած օտարազգի դրածո թագավորներից միայն Զենոն-Արտաշեսն է մահացել բնական մահով, մյուսները հայերի վրիժառության զոհ են դարձել:*

- *Պարթև Արշակունիները ծագել են միջինասիական սկյութական «պառն» կամ «ապառն» ցեղերից, որոնց մի մասը բնակություն է հաստատել Կասպից ծովի արևմտյան ափերին՝ Մեծ Հայքի Բաղասական երկրում:*

Լրացուցիչ նյութեր

Արտավազդ IV օտարազգի դրածո թագավորի մտավախությունը

4 թ. Հռոմեական կայսրությունը հայոց գահը հանձնում է Ավրպատականի թագավորի որդուն՝ Արտավազդին, ով թագավորում է Արտավազդ IV անվամբ: Երբ լրանում է Գահակալության 40 օրը, նրա հավատարիմ թիկնապահն իր փիրոջն ասում է.

– Տեր արքա, այս օրերին ես տնտղեցի արքունականներին ու շատ բան իմացա:

– Եվ...

– Եվ խորհուրդ եմ տալիս հեռանալ այս երկրից: Այս հայերի համար դու օտար մարդ ես, իսկ սրանք օտար արքա չեն հանդուրժում: Հեռացի՛ր, քանի դեռ գլուխդ ուսերիդ վրա է:

– Չեմ կարող:

– Ինչո՞ւ չես կարող:

– Եթե ես հեռանամ Արտաշատից ու հրաժարվեմ Հայաստանի գահից, հռոմեացիները կսպանեն ինձ: Ես ընկել եմ երկու քարի արանքը: Մնամ այստեղ՝ հայերն են սպանելու ինձ, գնամ այստեղից՝ հռոմեացիների զոհն եմ դառնալու: Ինչ անեմ:

– Փախի՛ր, տեր արքա, փախիր և՛ Հայաստանից, և՛ Ավրպատականից, և՛ Հռոմից, փախի՛ր ու փրկիր կյանքդ: Ավելի լավ է ապրել որպես սովորական մարդ, քան մեռնել որպես արքա,– խորհուրդ տվեց թիկնապահը:

Արտավազդը չհետևեց այդ խելացի խորհրդին և սպանվեց հայերի ձեռքով:

Դաս 34 Պարթևա-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը: Արշակունիների արքայատոհմի գահակալումը Հայաստանում

Գիտեք, որ...

- *Տրդատ I-ը Նեապոլում Ներոնի հետ առաջին հանդիպումից առաջ հրաժարվում է իր սուրը հանձնել՝ հակառակ կայսերական ընդունված արարողակարգի: Թագադրության ժամանակ այս խնդիրը լուծվեց սուրը պատյանում մեխերով ամրացնելով:*

- *Ալանական ցեղերի դեմ ճակատամարտի ժամանակ թշնամիներից մեկի նետած օղապարանն ընկնում է արքայի պարանոցը և նա հայտնվում է մահացու վտանգի մեջ: Հայոց արքան արագ կողմնորոշվում է. սրով կտրելով պարանը՝ հաղթական ավարտին է հասցնում ճակատամարտը:*

Լրացուցիչ նյութեր

Տրդատը

Հայոց գահին բազմած Տրդատը գալիս է Հռոմ՝ Ներոնից թագ ստանալու: Տեղի իշխանները նրան զարմացնելու համար ման են ածում քաղաքում և ցույց են տալիս գեղեցիկ ու մեծ շենքերը, այդ թվում՝ այն հայկական շենքը, որտեղ գտնվում էր ծերակույտը, և որտեղ պահվում էին օրենքների բազմաթիվ գրքեր: Երբ Տրդատը ճաշի է նստում, Ներոնը նրան հարցնում է.

Հայոց աշխարհում այսպիսի օրենքներ կա՞ն:

Հայոց աշխարհում օրենքները քիչ են, բայց լավն են,– պատասխանում է Տրդատը: – Մեր երկրում ամեն մարդ պարտավոր է իմանալ դրանք: Եթե հայոց ազգն իր օրենքները լավ պահի, ապա հռոմեացիները չեն կարող մոտենալ Հայաստանին:

Իսկ որո՞նք են Հայաստանի այդ օրենքները, որ մենք երբեք չենք լսել, – հարցնում է Ներոնը զարմանքով:

Առաջին օրենքն այն է, որ մեր թուրը ժանգոտ լինի, իսկ մանգաղը՝ հայելու պես փայլուն: Երկրորդ օրենքն այն է, որ դատարանի դռանը չտրորված կանաչ խոտ բուսած լինի, իսկ դրա փոխարեն՝ տաճարի բակում միշտ տրորված լինի: Երրորդը՝ մեզ պարտադրված կռվի ժամին բոլորս միասին լինենք, խաղաղ օրերին՝ ամեն մեկս մեր գործին՝ վարենք, ցանենք ու կառուցենք, – պատասխանում է Տրդատը:

Հայոց Տրդատ արքան Ներոնի արձանի առջև,
նկարիչ՝ Ա. Պինտո

Դաս 35 Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը

Գիտեք, որ...

- *Ասում են, որ Սանապրուկ թագավորը որսի ժամանակ մեռնում է մեկի նետը պատահմամբ նրա փորին դիպչելով, կարծես սուրբ դպրեր չարչարանքների վրեժը հատուցելով:*
- *Հյուսիսային Կովկասում գտնվել է հայոց Բակուր Արշակունու նշանավոր գավաթը, որի վրա պատկերված են զգեստավորված դերասան Դիոնիսոսը և դիոնիսիաները:*

Լրացուցիչ նյութեր

Անծանոթ հայը

Հռոմը գրավելով Արտաշատը, ձերբակալել է հայոց Բակուր թագավորին և տարել Հռոմ: Այնտեղ նրան որդեգրել են Ավրելիոսների տոհմում: Մի օր, երբ հայոց գահազուրկ արքա Բակուրն անցնում էր Հռոմի փողոցներից մեկով, մի անծանոթ մարդ գլուխ է տալիս նրան և խոնարհվում նրա առաջ:

Ո՞վ ես դու, մա՛րդ,– հարցնում է Բակուրը:

Հայ եմ,– պատասխանում է անծանոթը:

Ինչո՞ւ ես գլուխ տալիս ինձ, ես այլևս թագավոր չեմ:

Ես ոչ թե քեզ եմ գլուխ տալիս, այլ իմ Հայաստան հայրենիքին, որի թագավորն ես դու եղել, քեզ տեսնելով՝ ես իմ Հայաստանն եմ մտաբերում, քեզ գլուխ տալով՝ ես մտովի իմ հայկական հոգուն եմ հպվում, – ասում է անծանոթ հայը:

Խելացի թագուհին

Հայոց Վաղարշ Ի-ի կինը՝ տիկնանց տիկինը շատ խելացի և իմաստուն կին է եղել: Զրույցն ասում է, որ նա հորդորել է ամուսնուն՝ Վաղարշ Ի-ին, արձակել այսպիսի մի հրովարտակ. «...այն այրը, ով զորական չի եղել արքունական բանակում, 24 տարեկանից հետո մինչև կյանքի վերջը պարտավոր է տերությանը տալ որոշակի հարկ՝ հանուն արքունական բանակի հզորացման»:

Ես ճի՛շտ հասկացա քեզ, դշխո, քո ասածը վերաբերում է միայն նախարարական տների՞ն,– հարցրել է արքան:

Այո, տեր իմ, շինականները թող իրենց վար ու ցանքն անեն, հաց արարեն և շենացնեն մեր երկիրը, – պատասխանել է թագուհին:

Ցավոք, հայտնի չէ, թե Վաղարշ թագավորը միայն բավարարվել է թագուհու հետ համաձայնվելով, թե, իրոք, այդ բովանդակությամբ հրովարտակ է արձակել:

Փոքրիկ Սանապրուկը և Ավդե թագուհին եռօրյա ձնաբքից հետո, նկ.՝ Ջ. Ֆուզարո

Դաս 36 Հայաստանը և հարևան երկրները III դարում: Հայոց թագավորության վերականգնումը ու հզորացումը: Տրդատ III Մեծ

Գիտեք, որ...

- *Հռոմեական կայսրությունում գտնվելու տարիներին Տրդատը մասնակցել է օլիմպիական խաղերին և հաղթանակ տարել:*
- *Պարսից արքա Ներսեհի գահակալությունը շնորհավորողներից մեկը եղել է հայոց թագավոր Տրդատը: Վերջինս 28 շնորհավորողների թվում 14-րդն է հիշատակվում:*

Լրացուցիչ նյութեր

Ջուրը կարելի է խմել

Մեծ Հայքի պարսկական ենթակայության հատվածի դրածո թագավոր Որմիզդ-Արտաշիրը Հայաստանում թագավորելիս նախընտրում է միայն ջուր խմել: Մի անգամ պարսիկ սպասավորը նրան ասաց.

– Արքա, ինչո՞ւ ես կարծում, որ մարդիկ կարող են միայն խմիչքները թունավորել: Չէ՞ որ կարող են թունավորել նաև աղբյուրի ջուրը:

– Հայերը շատ խելոք են: Իսկ շատ խելոքի խելքը չի կտրի թունավորել սովորական ջուրը,– ասաց Որմիզդ-Արտաշիրը:

Խոսրով Մեծի երկարակեցությունը

Հայոց թագավոր Խոսրով I Մեծ Արշակունին գահակալել է 48 տարի: Ասում են՝ մահից մեկ տարի առաջ նրան հարցրել են.

– Երկարակեցությունը չի՞ հոգնեցրել քեզ:

– Ես հոգնել եմ ոչ թե երկարակեցությունից, այլ իմ գահի շուրջը ոստայն կազմող դավադրությունից: Միաժամանակ պիտի ասեմ, որ կես դար գահակալելը շատ շատ է: Իսկ շատ-շատը միշտ չէ, որ ապտվածահաճո է:

Ոսկու փոխարեն

Հայերն Արտավազդ V թագավորին վտարեցին իրենց երկրից: Տիզբոն հասնելուն պես նա ինքն իրեն ասում է.

– Ես ոսկու փոխարեն Հայաստանից իմաստություն բերեցի: Բերածս իմ կյանքի շարունակության համար ավելի շատ օգուտ կտա, քան ոսկին:

Հիսուսը փաճարում, նկարիչ՝ Հ. Հոֆման

Դաս 37 Քրիստոնեության առաջացումը և տարածումը: Քրիստոնեությունը հայոց քաղաքակրթության հիմնասյուն

Գիտեք, որ...

- *Քրիստոնեություն բառն առաջին անգամ օգտագործել է Իգնատիոս Անտիոքային (I-II դդ.)՝ Մագնեզիայի, Հռոմի եկեղեցիներին հղած նամակների մեջ:*
- *Հիսուս Քրիստոսը խաչվում է երկու ավազակի հետ, որոնք իրենց հրեական թագավորներ էին անվանում:*
- *Քրիստոնեությունը դաժանորեն հալածող Դիոկղետիանոս կայսեր կինը և դուստրը եղել են քրիստոնյաներ:*

Լրացուցիչ նյութեր

Օրենքի բացակայությունը

Հռոմեական կայսրության մեջ քրիստոնյաների դեմ ուղղված որևէ օրենք գոյություն չուներ: Քրիստոնյաներին դատի էին տալիս՝ մեղադրելով նրանց անաստվածության մեջ, քանի որ նրանք հրաժարվում էին պաշտոնական պաշտամունքներին մասնակցել: Նրանք մեղադրվում էին նաև երկրի մեծությանը՝ կայսրին վիրավորելու մեջ, որովհետև զոհեր չէին մատուցում նրա արձանի առջև, ինչպես նաև այն գաղտնի հանցագործությունների մեջ, որոնք նրանց էին վերագրում պտտվող լուրերը: Հալածանքները քրիստոնյաների նկատմամբ սկսում էր մեծ մասամբ մոլեռանդ ամբոխը, որին ոգեշնչում էին հեթանոս քրմերը: Քրիստոնեական ավանդության մեջ պատմվում է, թե հավատի համար նահատակվածները հրաժարվել էին զոհ մատուցելուց, հրաժարվել էին հավատակիցների անունները տալ և դատավորների հարցերին բացահայտ պատասխանել էին. «Ես քրիստոնյա եմ»: Քրիստոնյաներին ենթարկում էին ամենախիստ պատիժների՝ գցում էին գազանների առաջ հոշոտելու, այրում էին, քարկոծում: Նման հալածանքներից մեկը տեղի է ունենում Լուգուդունում (Լիոնում) 177 թ., Մարկոս Ավրելիոսի (161–180 թթ.) կառավարման օրոք, երբ Եվսեբիոսի տվյալների համաձայն, զոհվում են 48 քրիստոնյա:

Դաս 38 Քրիստոնեական վարդապետությունը: Աստվածաշունչ

Գիտեք, որ...

- *Նոր Կտակարանի, մանավանդ Ավետարանների և սաղմոսների քաջ իմացությունն ու անգիր անելը պարտադիր են եղել միջնադարյան վանքերում:*
- *Եկեղեցում Աստծո խոսքն ընթերցելուց առաջ հնչում են հատուկ կոչեր՝ «ուկնդրեցեք» («օրթի»), «ուղիղ դիմացդ նայիր» («Պրոսխումե») և «ասե Աստված», որոնք խոսքն ընկալելուց առաջ զգաստանալու կոչեր են:*
- *Աստվածաշնչի գրքերից առաջինը տպագրվել է «Սաղմոսարանը» 1565 թ. Վենետիկում: Այն տպագրել է Աբգար Դպիր Թոխաթեցին:*

Լրացուցիչ նյութեր

Աստվածաշնչի թարգմանությունը հայերեն

Քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հարյուր տարի հետո գրերի գյուտը և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը համարվում են ամենախոշոր իրադարձությունները Հայաստանում: Ըստ V դարի պատմիչներ Կորյունի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու, հայերեն թարգմանությունն ունեցել է երկու հանգրվան: Առաջինը կատարվել է գրերի ստեղծումից անմիջապես հետո (405 – 406 թթ.), մի քանի տարիների ընթացքում: Մեսրոպ Մաշտոցն իր երկու աշակերտների հետ Սամոսատում ձեռնամուխ է եղել Ս. Գրքի թարգմանությանը. նախ՝ թարգմանվել է Առակաց գիրքը՝ սկսելով «ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Թարգմանությունն ավարտվել է Վաղարշապատում կաթողիկոս Սահակ Պարթևի համագործակցությամբ:

Աստվածաշնչի երկրորդ թարգմանության շրջանը համընկնում է Եփեսոսի տիեզերաժողովին (431 թ.) հաջորդող տարիներին: Առաջին թարգմանությունը համարվում է «փութանակի», այսինքն՝ հապճեպ և անբավարար: Ուստի Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտները Բյուզանդիայից բերել են Եվսեբիոս Կեսարացու ձեռքով կազմված Հին և Նոր կտակարանների վավերական օրինակները, որոնք բյուզանդական եկեղեցու ընդունած բնագրերն էին: Ընդունելով Աստվածաշնչի այս օրինակը, Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը, ըստ Մ. Խորենացու, նորից թարգմանեցին առաջին անգամ շտապ թարգմանվածը: Նոր թարգմանությանը մասնակցում են նրանց աշակերտները՝ Եզնիկ Կողբացին, Հովսեփ Պաղնացին, Հովհան Եկեղեցացին, Ղևոնդ Վանանդեցին, Կորյունը և Արձան Արծրունին: Այս երկրորդ թարգմանությունը դարձավ «Թագուհի թարգմանությանը»:

Վերջին դատաստան, հեղինակ՝ Միքելանջելո

Դաս 39 Քրիստոնեության տարածումը Հայաստանում և հայաբնակ շրջաններում I-III դարերում: Աբգար թագավոր, ս. Թադեոս և ս. Բարդուղիմեոս առաքյալներ: Հայ Առաքելական եկեղեցու հիմնադրումը

Գիտեք, որ...

- *Թադեոսը և Բարդուղիմեոսը Հայաստանում իրենց քարոզչության ընթացքում միայն մեկ անգամ են հանդիպել, Արտաշատի կամրջի վրա, ապա բաժանվել:*

- *Պատմագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ նախարարական տոհմերից առաջինը Բագրատունիների նախնիներն են ընդունել քրիստոնեությունը:*

- *Բարդուղիմեոսը հայ միջնադարյան կերպարվեստում պատկերված է դաշույնով (որով մորթազերծ է արվել) և Տիրամոր պատկերը ձեռքին:*

Լրացուցիչ նյութեր

Ոսկյանք և Սուքիասյանք

Թադեոս առաքյալի քարոզները հրապուրիչ են լինում նաև Հայաստան եկած օտարերկրացիների համար: Ըստ հայոց վկայաբանության, Հռոմի կայսրը հինգ հոգուց կազմված պատվիրակություն է ուղարկում Հայաստան, Սանատրուկ թագավորի մոտ: Նրանք Հայաստանում հանդիպելով Թադեոս առաքյալին, լսելով նրա սքանչելի քարոզները, հրաժարվում են հեթանոսական կրոնից և իրենց աշխարհիկ առաքելությունից, մկրտվում են նրա ձեռքով և հաստատվում քրիստոնեական հավատքի մեջ: Թադեոսը նրանց գլխավորին՝ Ոսկուն, ձեռնադրում է քահանա, ում անունով էլ նրանք կոչվել են Ոսկյանք:

Թադեոսի նահատակությունից հետո նրանք հաստատվել են Ծաղկոտն գավառի Ծաղկանց լեռներում և 40 տարի ճգնել այնտեղ: Հետո նրանք իջել են լեռներից և գնացել Արտաշատ՝ հայոց արքունիք, Ավետարանը քարոզելու հայոց թագավորին և ողջ պալատականներին: Նրանց քարոզչության ազդեցության տակ հայոց թագուհու հետ Հայաստան եկած և արքունիքում ապրող նրա ազգակից 60–70

ալանական իշխանները դավանափոխ են լինում և մկրտվում Հիսուս Քրիստոսի անունով: Հայոց արքայորդիները չեն կարողանում նրանց փարհամոզել վերադառնալու արքունական կյանքին: Իրենց առաջնորդ Սուքիասի գլխավորությամբ, նրանք, որ կոչվում էին Սուքիասյանք, հավատարիմ են մնում քրիստոնեական հավատին: Ուստի իրենց զայրույթը թափում են Ոսկյանների վրա, որպես իրենց ազգականներին մոլորեցնողների, և սպանում են նրանց:

Ոսկյանների նահատակությունից հետո նրանք լքում են արքունիքը և առանձնանում Բագրևանդ գավառի Ջրբաշխ լեռան ստորոտում, որը ինչպես կարծում են նրանց անունով կոչվում է Սուկավետ:

Շատ տարիներ անց ալանների թագավոր Գիգիանոսը պատվիրում է իր զորավարին գնալ Հայաստան և Սուքիասյանց պատվով հետ բերել, եթե միայն հրաժարվեն քրիստոնեությունից, հակառակ դեպքում՝ սպանել բոլորին: Նրանք մերժում են ալանների թագավորի պահանջը և նահատակվում Հայաստան գալուց 44 տարի անց:

Աբգար թագավոր,
նկարիչ՝ Մ. Հովնաթանյան

Դաս 40 Հայաստանը՝ առաջին քրիստոնյա պետություն. ս. Տրդատ Մեծ և ս. Գրիգոր Լուսավորիչ

Գիտեք, որ...

- *Գրիգոր Լուսավորչից Հայաստանում մնացած միակ սրբությունը եղել է Լուսավորչի աջը, որը հայրապետական իշխանության գլխավոր պաշտոնական նշանակն է:*

- *Գրիգոր Պարթևի՝ Անակի որդի լինելու փաստը Տրդատին հայտնել է նախարար Արտավազդ Մանդակունու քրոջ ամուսին Տաճատ Աշուցքեցին:*

- *Գրիգոր Լուսավորիչը, որպես համաքրիստոնեական սուրբ, ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիներում ունի իր հիշատակի օրը՝ սեպտեմբերի 30-ը:*

- *330 թ. հրաժարվելով գահից՝ Տրդատ III-ը հեռացել է Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռան Մանյա այրք կոչված վայրը, որտեղ ճգնել էր Գրիգոր Լուսավորիչը: Ըստ Մ. Խորենացու, նրան այստեղ թունավորել են հայ նախարարները:*

Լրացուցիչ նյութեր

Գրիգոր Լուսավորչի լույս հավատի խորհրդանիշները

XIII–XIV դարերում «Լուսավորչի լույս հավատքի» խորհրդանիշն են դարձել երկու աննյութեղեն առարկաներ՝ Սեպուհ լեռան վրա շողացող Տրդատ թագավորի Հավլունի թուրը և Արագած լեռան կատարին առանց պարանի կախված Լուսավորչի կանթեղը: Դրանք միասնաբար խորհրդանշում են հայոց թագավորի և հայոց հայրապետի, պետության և եկեղեցու գործակցությունը:

Ավանդության համաձայն՝ Տրդատ III Մեծը, Գրիգոր Լուսավորչի նման, կյանքի վերջին տարիներին տրվել է առանձնության Սեպուհ լեռան վրա: Հայոց հայրապետը, վերցնելով հայոց արքայի թուրը, օրհնել է և նետել վեր: Աստվածային զորությամբ սուրը խաչանման կախվել է Սեպուհ լեռան վրա, և Լուսավորչի մշտավառ կանթեղի լույսով ուղղված լույս է տալիս այնտեղից: Այդ թուրը կոչվում է Հավլունի, որը ,ժողովրդական ստուգաբանությամբ, նշանակում է հավու ուլնի, այսինքն՝ հավի երկաթ, և ունի ամուր սրի իմաստ: Այդ մասին առաջին անգամ գրել է Վարդան Վարդապետը իր «Աշխարհացույց»-ում:

Տրդատ III-ի աղաչում է Գ.Լուսավորչին վերադարձնել իրեն մարդկային կերպարանքը, նկարիչ՝ Ֆ. Ֆրանկանցանո

Դաս 41 Հայոց եկեղեցական կառույցի ձևավորումն ու ամրապնդումը: Հայոց եկեղեցու դերի և ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում

Գիտեք, որ...

- *Գրիգոր Լուսավորչին անվանել են «Հայոց Մկրտիչ» և «Երկրորդ Լուսավորիչ Հայոց» որովհետև առաջին լուսավորիչ եղել են Թադեոսը և Բարդուղիմեոսը:*
- *Տրդատ III արքայի կամքով հոգևորականությունը դասվել է ազատների կարգը և օժտվել ապահարկությամբ:*
- *Տրդատ արքայի մկրտության վայրում՝ կա մի քար, որ կոչվում է «Տրդատի արձան»:*
- *Մովսես Խորենացին Տրդատ III Մեծին բնորոշել է որպես հայոց վերջին հզոր թագավոր, իսկ քրիստոնեության տարածման ու ամրապնդման գործում առաջատար դեր է վերապահել նրան:*

Լրացուցիչ նյութեր

Մկրտության հրաշքը

Երբ բոլոր մարդիկ ու թագավորն իջնում էին այնտեղ՝ Եփրատ գետի ջրերի մեջ մկրտվելու, Ասծուց սքանչելի հրաշք երևաց, քանզի գետի ջրերը կանգնելով հետ դարձան: Սաստիկ լույս երևաց լուսավոր ոյան նման և կանգնեց ջրերի վրա ու նրա վրա տերունական խաչի կերպարանքը, և լույսն այնքան ծագեց, մինչև որ արգելեց ու նվազեցրեց արեգակի ճառագայթները: Օծության յուղը, որ Գրիգորը մարդկանց վրա էր թափում, գետի վրա շրջան կապարելով մարդկանց շուրջն էր պտտվում: Ամենքը զարմացած օրհնություն էին տալիս ի փառս Ասծու: Օրվա երեկոյան հրաշքն աներևույթ եղավ և նրանք դեպի վեր՝ ավան վերադարձան:

Ելան այնտեղից մեծ ցնծությամբ, սպիտակ, հանդերձներով, սաղմոսներով ու օրհնություններով, վառ կանթեղներով ու մոմերով և լուսավառ ջահերով, մեծ ուրախությամբ և սաստիկ զվարթությամբ լուսավորված ու հրեշտակացած վեր ելան, տերունական տունը դարձան: Այնտեղ (Գրիգորը) օրհնության պատարագ մատուցեց, ամենքին հաղորդություն տվեց գոհության խորհրդով , բոլորին բաշխեց սուրբ մարմին ու պատվական արյունն ամենափրկիչ Քրիստոսի, որ կենարարն էր ու կեցուցիչը ամեն մարդկանց, արարիչն ու աշխարհագործը բոլոր արարածների, և աստվածատուր շնորհներն ամենքին առատորեն մատակարարեց:

Դաս 42 Հայոց եկեղեցու նվիրապետությունը, խորհուրդները, եկեղեցիների կառուցվածքը

Գիտեք, որ...

- *Հայոց եկեղեցում եպիսկոպոսին ձեռնադրելու և օծելու իրավունք վերապահված է միայն կաթողիկոսին: Օծելուց հետո եպիսկոպոսի գլխին դրվում է խույր, և կաթողիկոսը նրան տալիս է գավազան, մատանի և Ավետարան:*
- *Կաթողիկոսին ողջունում են ասելով. «Աստված օգնական, վեհափառ տեր», եպիսկոպոսին՝ «Աստված օգնական, սրբազան հայր», իսկ քահանային՝ «Օրհնեցեք, տեր հայր»: Աբեղային և վարդապետին ողջունում են, ասելով. «Աստված օգնական, հայր սուրբ»:*
- *Հոգևոր հայրերը եկեղեցու խորանը կոչում են դրախտ կամ երկինք, որտեղ անտեսանելի կերպով ներկա է Սուրբ Երրորդությունը: Նրան շրջապատում են երկնային զորությունները՝ սուրբ հրեշտակները:*

Լրացուցիչ նյութեր

Եկեղեցու կառուցումը և օծումը

Եկեղեցին կառուցելիս պարտադիր էր նրա հորինվածքը համաձայնեցնել թեմի եպիսկոպոսի հետ, հակառակ դեպքում նա իրավունք ունի մինչև իսկ քանդել տալու արդեն կառուցված շենքը: Եկեղեցու կառուցման գլխավոր պայմաններից է հիմնարկեքի և օծման արարողությունը: Հիմնարկեք կատարող եպիսկոպոսն օծում է 16 քար, որոնցից 12 – ը՝ առաքյալների, 2-ը՝ Մարկոս և Ղուկաս ավետարանիչների, 2-ը՝ Պողոս առաքյալի և Գրիգոր Լուսավորչի անուններով: Այնուհետև օծված քարերը դրվում են եկեղեցու հիմքում՝ յուրաքանչյուրն իրեն հատկացված տեղում:

Եպիսկոպոսապետը ըստ Պողոս առաքյալի

«Պետք է, որ եպիսկոպոսն անբասիր լինի, որպես Աստծո տնտես, ոչ հանդուգն, ոչ բարկացող, ոչ անարգող, ոչ կռվարար, ոչ շահասեր, այլ հյուրասեր, բարեսեր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, ամուր կապված վարդապետության հավատի խոսքին, որպեսզի կարողանա հորդորել ողջամիտ վարդապետությամբ և կշտամբել հակառակորդներին»:

Դաս 43 Ավատատիրական հասարակության ձևավորումը

Գիտեք, որ...

- *Տոհմիկ ազնվականությանը կարող էր դատել միայն թագավորը, իսկ բարձր հոգևորականությանը՝ կամ թագավորը, կամ կաթողիկոսը:*
- *Սպանված ազատի (մանր ազնվականի) արյան գինը երկու անգամ ավելի բարձր էր սպանված շինականի արյան գնից:*
- *Ընդունված սովորության համաձայն, փարվա որոշակի օրերին նախարարները ոսկի էին մատուցում արքային: Ոսկի մատուցելու այդ սովորությունը կոչվում էր պատարագ:*

Լրացուցիչ նյութեր

Ժառանգական հողատիրույթի բռնագրավումը

Խոսրով Կուրակի ժամանակ «Հայոց աշխարհում մեծ խռովություն ծագեց, որովհետև երկու մեծ նախարարներ ու իշխաններ, գավառների ու աշխարհների տերեր, իրար դեմ թշնամացան, մեծ ոխակալությամբ կռիվ բորբոքեցին և միմյանց հետ պատերազմում էին առանց իրավունքի ու պղտորում էին Հայոց մեծ աշխարհը. մեկը Մանավազյան տոհմի իշխանն էր, իսկ մյուսը՝ Որդունյաց տոհմի նահապետը: Սրանք մեծ պատերազմով կռվեցին, և շատ մարդիկ կոտորվեցին ու ոչնչացան: Ապա Խոսրով թագավորը և Վրթանես եպիսկոպոսապետը Ալբիանոս պատվական մեծ եպիսկոպոսին ուղարկեցին նրանց մոտ, որպեսզի հորդորելով հաշտեցնի և խաղաղություն հաստատի: Երանելի Ալբիանոսը գնաց նրանց մոտ, որ համոզի, իրար հետ հաշտեցնի: Բայց նրան անարգեցին, նրա բարեխոսությունը չլսեցին, ուղարկողներին արհամարհեցին, եպիսկոպոսին մեծ անարգանքով հետ դարձրին և արքունական տունն առան ու ավերեցին և խիստ զայրացած, հապճեպ կերպով պատերազմում էին միմյանց դեմ: Ապա թագավորը, սաստիկ զայրանալով, նրանց վրա ուղարկեց Արտավազդի որդի Վաչեին՝ Մամիկոնյան տոհմի նահապետին...

Ապա Վաչե զորավարը գնաց նրանց վրա, երկու տոհմն էլ ջարդեց, ոչնչացրեց, երկու կողմերից էլ ոչ մի արու զավակ չթողեց և ինքը վերադարձավ Խոսրով թագավորի և Վրթանես քահանայապետի մոտ»:

Թագավորը Մանավազյանների հողային տիրույթները նվիրում է Ալբիանոս եպիսկոպոսին, իսկ Որդունիների տիրույթները՝ Բասենի եպիսկոպոսին:

Դաս 44-45 Կենտրոնական իշխանության զորեղացման փորձերը

Գիտեք, որ...

- *Հռոմեական պատմիչ Ամիանոսը, ով հռոմեական բանակի զինվորական էր, դեպքերի ականատես ու մասնակից, Արշակ II-ին անվանում է հռոմեացիների մշտական ու հավատարիմ բարեկամ:*
- *Արևելքի առևտրական խոշորագույն կենտրոն Մծբինը «Ամոթալի հաշտությամբ» 120 տարով՝ մինչև 483 թ., հանձնվում է Սասանյաններին:*
- *Պապի օրոք Մուշեղ սպարապետն ազատագրում է Արցախը, միացնում է Մեծ Հայքին: Այն հանձնում են Սյունյաց նախարարական ընտանիքի կրտսեր ճյուղին, ինչի համար երկրամասը (Արցախը) ստացավ Փոքր Սյունիք անունը:*

Լրացուցիչ նյութեր

Պապ թագավորի հիացմունքը

Զիրավի ճակատամարտից հետո նրա հակառակորդները Մուշեղ զորավարին ամբաստանում են Պապ թագավորի առաջ, ասելով. «Իմացի՛ր, արքա՛, որ խիստ նենգությամբ է վարվում Մուշեղը քեզ հետ և քո մահվանն է սպասում, որովհետև նա քո թշնամիներին շարունակ ազատ է արձակում: Շատ անգամ իր ձեռքն է գցել թշնամիներիդ, բայց էլի, ըստ սովորության, արձակել է, որովհետև նա Ուռնայր թագավորին արձակեց և կյանք բաշխեց քո հակառակորդին, որ իր ձեռքում էր»: Այդ պատճառով հաճախ գժտություն էր պատահում Պապ թագավորի և Մուշեղ զորավարի միջև, և շատ անգամ այս պատճառով Պապը հանդիմանում էր նրան: Իսկ Մուշեղ զորավարը պատասխան էր տալիս Պապին և ասում էր. «Ես իմ ընկերներին՝ բոլորին կոտորեցի, իսկ նրանք, որ թագ էին կրում, իմ ընկերները չէին, այլ քո, ե՛կ, ինչպես ես իմ ընկերներին սպանեցի, այնպես էլ դու քոնոնց, բայց ես թագավոր մարդու վրա, որ գլխին թագ է կրում, ո՛չ ձեռք եմ մեկնել, ո՛չ մեկնում եմ, ո՛չ էլ կմեկնեմ: Եթե ուզում ես ինձ սպանել, սպանի՛ր, բայց ես, եթե երբևիցե մի թագավոր մարդ ձեռքս անցնի, ինչպես շատ անգամ պատահել է, ևս չեմ սպանի թագավոր մարդու, որ թագ է կրում, թեկուզ ինձ էլ սպանեն»:

Պապ թագավորը, երբ այս խոսքերը լսեց, արտասվեց, գահույքից վեր կացավ, բռնեց Մուշեղին, փաթաթվեց նրան և լաց եղավ Մուշեղի վզին փաթաթված ու ասաց. «Մահապարտ են այն մարդիկ, ովքեր հանդգնում են չար բերան բանալ Մուշեղի՝ այս քաջ ու պատվական մարդու մասին...»: Պապ թագավորը մեծ պարգևներ ու պատիվներ և գյուղեր է նվիրում Մուշեղ զորավարին:

Դրաստամատն ինքնասպանություն է գործում, նկարիչ՝ Ջ. Ձասսո

ԱՐՇԱԿ ԵՎ ԴՐԱՍՏԱՄԱՏ

Այդ ժամանակներում հայոց Արշակ թագավորը դեռևս ողջ էր և բանտարկված Պարսկաստանի հեռավոր Անհուշ բերդում:

Պարսիկները դադարեցրել էին հայերի դեմ մղած երկարամյա կռիվները, որովհետև քուշանների Արշակունի թագավորը, որ նստում էր Բալխ քաղաքում, պատերազմ էր սկսել Արշակունիների թշնամի Սասանյան տոհմի ժառանգ պարսից Շապուհ թագավորի դեմ:

Շապուհ թագավորը հավաքում է իր բոլոր զորքերը, այդ թվում նաև Հայոց աշխարհից գերի տարված հեծելազորը և պատերազմի տանում քուշանների դեմ: Շապուհի հետ քուշանների կռվին մասնակցում էր նաև Արշակ թագավորի հետ Պարսկաստան գերի տարված Արշակ թագավորի ներքինին՝ Անգեղտան իշխան Դրաստամատը: Նա դեռևս Տիրան թագավորի ժամանակներից իշխում էր Անգեղտան վրա, նրան էր ենթակա նաև Ծոփքի Քնաբերդ կոչված բերդը, ուր պահվում էին արքունի գանձերի մի մասը: Նա մեծ իշխանության տեր էր, սիրված Արշակ թագավորից ու պատիվների արժանացած: Նրա իշխանական դիրքը հայոց մյուս իշխաններից ամենաբարձրն էր:

Շապուհի զորքը քուշանների հետ վարած կռիվներում սաստիկ նեղվում է, մեծ ջարդ կրում, մի մասն էլ գերի է ընկնում կամ փախչում: Այդ ճակատամարտին մասնակցում էր նաև Դրաստամատը: Նա մեծ քաջագործություններ է կատարում այդ կռվում, քուշաններից շատերին

կոտորում, գլուխները կտրում բերում Շապուհի առջև: Երբ Շապուհը պարտվելով շրջապատվում է քուշաններից, Դրաստամատը անասելի խիզախությամբ մարտնչում է շրջապատողների դեմ և իր մահն աչքի առաջ՝ շրջապատումից դուրս է հանում Շապուհին, փրկում նրա կյանքը:

Պարսկաստան վերադառնալիս Շապուհը մեծ շնորհակալություն է հայտնում Դրաստամատ ներքինուն՝ նրա ծառայությունների համար, ապա ասում.

— Դրաստամատ, խնդրիր ինձանից ինչ-որ կամենում ես, ես քեզ ոչինչ չեմ մերժի:

— Արքա, — ասում է Դրաստամատը, — ես քեզանից ոչինչ չեմ ուզում, միայն խնդրում եմ, որ հրաման տաս ինձ, գնամ տեսնեմ իմ իսկական տիրոջը՝ հայոց Արշակ թագավորին: Ես քեզանից միայն մեկ օրվա տեսակցություն եմ խնդրում և իրավունք, որ թույլ տաս նրան կապանքներից արձակեմ, իմ ձեռով նրա գլուխը լվանամ, օծեմ, ազնիվ զգեստ հագցնեմ, նրա համար սեղան պատրաստեմ, նրա առաջ խորտիկներ դնեմ, գինի մատուցեմ և նվագով նրան ուրախացնեմ:

— Դժվար բան խնդրեցիր, — ասում է Շապուհ թագավորը, — որովհետև պարսից թագավորության գոյությունից ի վեր այդ բերդը կոչվել է Անհուշ այն բանի համար, որ ոչ ոք չի համարձակվել թագավորներին հիշեցնել, թե նրանք այնտեղ որևէ մեկին բանտարկել են, կամ չի հիշատակվել որևէ մեկը այն մարդկանցից, ում այդ բերդում բանտարկել են. էլ ուր մնաց, որ հիշատակվի իմ հակառակորդը, ինձ հավասար թագավորը, որ իմ հրամանով կապված է այդ բերդում: Մինչդեռ դու խախտեցիր այդ կարգը և մեզ անհանգստացրիր:

Դո՛ւ, Դրաստամատ, մահդ աչքդ առար և հիշեցրիր Անհուշը՝ անհիշելին, մի բան, որ Արյաց թագավորության մեջ, իր գոյության սկզբից մինչև օրս բնավ չէր պատահել: Բայց մեծ են քո ծառայությունները իմ հանդեպ, թող կատարվի քո ցանկությունը, գնա՛, ինչ որ խնդրեցիր՝ տալիս եմ: Միայն զարմանում եմ, որ դու քո օգուտի համար չես մտածում. փոխանակ ինձանից երկրներ, գավառներ, գանձեր խնդրեիր, քո թագավորին տեսնել ես խնդրում: Թող դա բացառություն լինի Արյաց թագավորության օրենքի մեջ, գնա՛, քեզ տվեցի, ինչ որ խնդրեցիր քո ծառայության փոխարեն:

Շապուհը Դրաստամատին տալիս է մի հավատարիմ թիկնապահ, արքունական մատանիով կնքված հրովարտակ, որով թույլատրվում էր Դրաստամատին մտնել Անհուշ բերդը, տեսնել իր կապված թագավորին և անել այն, ինչ կամենում է:

Դրաստամատն արքունական հրովարտակով ու թիկնապահով գնում

է Անհուշ բերդը, հանդիպում իր իսկական տիրոջը՝ Արշակին: Արձակել է տալիս երկաթե կապանքները, հանում ոտնակապերն ու ձեռնակապերը, գլուխը լվանում, լողացնում, ապա Արշակին հագցնում է ազնիվ զգեստներ, սեղան սարքում, Արշակին բազմեցնում է սեղանի գլխին, նրա առաջ դնում արքայավայել ընթրիք, ընտիր գինի և, ինչպես թագավորների կարգն էր, նրան զվարճացնում է և ուրախացնում գուսանների երգ ու նվագով:

Ապա ընթրիքից հետո սեղանի վրա աղանդեր ու միրգ են դնում՝ խնձոր, վարունգ, ամիճ, Արշակի առջև դանակ են դնում, որպեսզի կտրի և ուտի, ինչպես կամենա: Իսկ Դրաստամատը իր թագավորի առջև ոտքի կանգնած՝ շարունակ նրան էր ծառայում, ուտելիք, գինի ու միրգ մատուցում, ուրախացնում էր ու մխիթարում:

Երբ Արշակը ընթրիքից հագենում է, գինի է խմում, գինին գլուխն է ընկնում, հարբում, հպարտությամբ հիշում է իր նախկին արքայական վիճակը և աղաղակում.

— Վա՜յ ինձ, Արշակիս, որտեղից ուր ընկա և ինչ օրի հասա:

Դանակը, որ բռնել էր և պիտի միրգ կտրեր, ուժգնությամբ խրում է իր սիրտը և իր նստած տեղում մեռնում:

Դրաստամատը արագ վրա է ընկնում, դանակը քաշում հանում է թագավորի մարմնից և խրում իր կողը, և ինքն էլ նույն ժամին մեռնում իր թագավորի հետ:

Աղբյուր՝ Ս. Հարություն, Հայ հին վիպաշխարհ
http://armenianhouse.org/harutyunyan/09-persian-war-c.html#8

Փառանձեմ թագուհու վերջին կռիվը, նկ.՝ Ռ. Քոչարյան

Դաս 46-47 Արշակունյաց թագավորության թուլացումն ու անկումը

Գիտեք, որ...

- *Արշակի եղբայր Վաղարշակը, ով թագավորում էր եղբոր հետ, շատ վաղ է մահանում: Ուսումնասիրողները հայտնում են, որ 380 թ. Հռոմեական կայսրության կողմից եղբայրների արքայական իշխանության ճանաչումից քիչ ժամանակ անց նա մահանում է:*
- *Վարազդատը մի բերդի վրա հարձակում գործելիս, նետով վիրավորում է տասնյոթ մարդու, որոնք պարսպի վրայից ցած են թափվում այնպես, ինչպես հասած թզերը թափվում են սաստիկ քամուց:*
- *Խորենացու հաղորդման համաձայն, Արշակ III-ի մայրը պատանդ է եղել Կոստանդնուպոլսում: Դա դարձել էր Արշակ III-ի՝ Հայաստանի հռոմեական մաս տեղափոխման պատճառներից մեկը:*

Լրացուցիչ նյութեր

Մամիկոնյան եղբայրները

Մանվել և Կոն Մամիկոնյան եղբայրները խոշոր կազմվածքով հսկաներ էին, թանձրամարմին «հաստամեսպ», վիթխարիներ, ինչպես ժողովրդական բանահյուսության մեջ է բնորոշվում՝ աժդահաներ: Նրանք գերի էին տարվել Պարսկաստան՝ Շապուհի Հայաստան կատարած արշավանքների ժամանակ: Այստեղ նրանք պարսկական զորքերի շարքում մասնակցում են հեռավոր քուշանների դեմ մղվող կռիվներին: Պարսիկներն այդ կռիվներում չարաչար պարտվում են և ջնջվում, իսկ երկու հսկա եղբայրները խուսափում են մահից և ոտքով վերադառնում են Շապուհի մոտ:

Վերջինս սաստիկ վշտացած էր իր բանակի կորստով, ուստի արհամարհելով Մամիկոնյան եղբայրներին, հեռացնում է նրանց, նույնիսկ իրավունք տալիս վերադառնալու իրենց երկիր: Մանվելն ու Կոնը ճանապարհ են ընկնում դեպի Հայաստան ոտքով: Ճանապարհին Մանվելն սկսում է հետ մնալ, նրա ոտքը ցավում էր: Այդ ժամանակ Կոնը, առանց երկար ու բարակ մտածելու, իր շալակն է առնում եղբորը և շարունակում ճանապարհը. այսպես՝ հսկան շալակին մտնում է Տարոն: Վաչե Մամիկոնյանն իսկույն ճանաչում է Մանվելի՝ իբրև Մամիկոնյան տան ավագագույնի իրավունքը և նրան է տալիս նահապետությունը: Բայց այդ մասին, Մանվելը խախտելով ընդունված կարգը, հարկ չի համարում հայտնել Վարազդատ թագավորին՝ հավանության արժանանալու համար: Նա ինքնագլուխ ստանձնում է

սպարապետի պաշտոնը, հայտնելով ամենքին, թե ինչը որ իրեն պատկանում է տոհմական ժառանգական իրավունքով, ոչ ոք չի կարող խլել իրենից:

Վարազդատ սպանում է իր վրա հարձակված լոմբարդացիներին,
նկարիչ՝ Ջ. Ջասսո

Դաս 48 Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները IV-V դարերում: Ազգային-եկեղեցական ժողովներ

Գիտեք, որ...

- *Շահապիվանի եկեղեցական ժողովին մասնակցել են 40 եպիսկոպոսներ, վանականներ, երեցներ, սարկավագներ, նախարարներ, ազատներ, շինականներ:*
- *Ըստ պատմաբան Նիկողայոս Ադոնցի, «հող երդոյի» չափերը, դրա արգավանդությամբ պայմանավորված, տարածվում էր 5-12 հեկտարի:*
- *Վրթանես կաթողիկոսն իր 12-ամյա որդուն՝ Հուսիկին ամուսնացնում է Խոսրով III-ի դստեր հետ:*

Լրացուցիչ նյութեր

Սուրբ Հուսիկ կաթողիկոսի նահատակությունը (ըստ Մովսես Խորենացու)

Տիրանը Ծոփաց գավառ հասնելով, կամեցավ Հուլիանոսի պատկերը դնել իր արքունիքի եկեղեցում: Սուրբ Հուսիկը պատկերը հափշտակեց թագավորի ձեռքից, գետին գցեց և ոտքով տրորեց ու մանրեց՝ հասկացնելով թագավորին բանի խորամանկությունը: Տիրանը նրան չլսեց, վախենալով Հուլիանոսից, որովհետև մտածեց, թե ինքը կարող է մեռնել, իբրև թագավորի պատկեր ոտնակոխ անող: Ուստի ավելի բորբոքվեց նրա մեջ զայրույթը, որ տածում էր դեպի սուրբ Հուսիկը՝ իր հանցանքները շարունակ հանդիմանելու պատճառով, և հրամայեց ճիպոտներով այնքան երկար ծաղկել նրան, որ ծեծելիս հոգին ավանդեց: Նրա վախճանվելուց հետո Տիրանին նախատինքի և անեծքի ենթարկեց Դանիել քահանան, ով սուրբ Գրիգորի աշակերտն ու սպասավորն էր, ուստի հրամայեց նրան խեղդամահ անել: Աշակերտները նրա մարմինը վերցնելով, թաղեցին նրա միայնարանում, որ կոչվում էր Հացյաց դրախտ: Իսկ սուրբ Հուսիկի մարմինը վերցրին տարան իր հոր մոտ՝ Թորդան գյուղ:

Դաս 49 Արշակունյաց թագավորության պետական կառավարման համակարգը և բանակը

Գիտեք, որ...

- *IV դարի սկզբին Մեծ Հայքի տարածքը կազմում էր 311 հազար քառ. կմ՝ մոտ 4 մլն բնակչությամբ:*

- *Արքունիքում գործակալի պաշտոնը դիտվում էր որպես «պատիվ»: Այն ստացողը գլխին հատուկ ժապավեն էր կրում, որը նույնպես կոչվում էր պատիվ: Այստեղից էլ առաջացել է հայերեն պատվական բառը, ներկա իմաստով՝ պատվավոր, ազնիվ:*

- *Կարծիք կա, որ հայոց բանակի գերագույն հրամանատարը սկզբում եղել է հազարապետը: Սպարապետություն գործակալությունը հանդես է եկել II դարի վերջից՝ Վաղարշ II-ի օրոք, երբ հայ Արշակունիների արքայատոհմը դարձավ ժառանգական:*

Լրացուցիչ նյութեր

Տրդատ Մեծի վարձահատույց լինելը

«Երբ նա (Տրդատը) Կեսարիա հասավ, նախարարներից շատերը նրան ընդառաջ գնացին: Երբ հասավ մեր երկիրը, տեսավ, որ Օտան սնուցել է իր Խոսրովդուխտ քրոջը և պահպանել գանձերն ու ամրոցը մեծ համբերությամբ, և իսկապես նա համբերող էր, ժուժկալ ու շատ խելացի... Տրդատը Հայաստանի հազարապետ է նշանակում Օտային և շնորհակալությամբ պատվում նրան»:

Նա պատվում է նաև իր դայակորդի Արտավազդ Մանդակունուն, որ պատճառ եղավ իր փրկության և հայրենական փառքին հասնելու, ուստի նրան է հանձնում հայոց զորքերի սպարապետությունը: Նույն պատճառով նրա քրոջ ամուսին Տաճատին Աշոցք գավառի տեր է դարձնում:

Դաս 50 Հասարակական հարաբերությունները: Առօրյա կյանքն ու կենցաղը

Գիտեք, որ...

- *Անհիշելի ժամանակներից մեր նախնիք պաշտել են ծառն ու անտառը: Այդ պաշտամունքի հետ են կապված ժողովրդական մի քանի տոներ, որոնցից մեկն է ծաղկազարդը: Ծառապաշտության մնացորդ է տոնածառը, որի սովորությունը գալիս է հեթանոսական ժամանակներից:*
- *Համաձայն ընդհանուր տեղեկությունների, միջնադարում թատերական ներկայացումները և մարզական ու այլ տիպի խաղերը տեղի էին ունենում ամսվա առաջին օրերին: Այդ օրերը Հունաստանում, Հռոմում, Բյուզանդիայում կոչվում էին կալենդեր, իսկ Հին և միջնադարյան Հայաստանում՝ «կալենդամսագլուխք»:*

Լրացուցիչ նյութեր

Մահապատիժ՝ որսորդության դիմաց
(ըստ Մ. Խորենացու)

Արշակ թագավորը որսի գնաց Մասիսի թիկունքում իր սիրած Կոգովիտ գավառը: Սաստիկ մեծ որս եղավ, և Արշակը խմելիս պարծենում էր, թե իրենից առաջ ոչ մի թագավորի ժամանակ այսքան բազմաթիվ երեներ չեն կոտորվել մի ժամում: Այստեղ Տիրիթն ու Վարդանը նորոգում են իրենց նենգությունն ասելով, թե Գնելը այդ օրերին ավելի շատ երեներ է սպանել իր լեռան վրա: Ուստի (Արշակը) այսպիսի հրովարտակ է ուղարկում նրան. «Մեծ Հայքի թագավոր Արշակն իր Գնել որդուն ողջունում է: Այստեղ, Ծաղկանց լեռան վրա և ջրավետ տեղում ընտրիր և պատրաստիր առատ որսով տեղ, որպեսզի մենք գանք և թագավորավայել որսի հանդիպենք»:

Հրովարտակն ուղարկելուց հետո Արշակն իսկույն գնաց, մտածելով՝ եթե Գնելը հրամանի համաձայն ամեն ինչ չի կատարել, նրան կապի, իբրև թե նա դժկամել է թագավորի ուրախությունը տեսնել: Երբ գալիս տեսնում է որսի այնպիսի պատրաստություն և երեների այնպիսի բազմություն, որ նա երբեք չէր տեսել, խոցվում է սրտում նախանձից ու կասկածներից և հրամայում է նույն Վարդանին՝ որսատեղում սպանել Գնելին, իբր թե պատահմամբ նետը որսի վրա արձակելիս նրան է դիպել:

Այս հրամանը ստանալով՝ նա իսկույն կատարում է:

Նոներով պար, նկարիչ՝ Ռ. Քոչարյան

Դաս 51 Հայկական հելլենիզմի մայրամուտը: Արշակունյաց Հայաստանի մշակութային ժառանգությունը

Գիտեք, որ...

- *Գառնիի տաճարը կանգնած է մնացել մինչև XVII դարի 2-րդ կեսը: Այն կործանվել է 1679 թ. երկրաշարժի ժամանակ: 300 տարի անց՝ 1971 թ. տաճարը վերականգնեց ճարտարապետ Ա. Սահինյանը:*

- *V դարի կաթողիկոս Հովհաննես Մանդակունին վկայում է, որ թատրոն էին հաճախում ոչ միայն տղամարդիկ, այլ նաև կանայք: Նա ժողովրդական թատրոնի դեմ ուղղված հիմնական մեղադրանքներից մեկը համարում է այն, որ թատրոնը «որդիներին թշնամացնում է հայրերի, իսկ սրրուկներին՝ տերերի հետ»:*

Լրացուցիչ նյութեր

Ուշ հելլենիստական քանդակ

Գառնիի հեթանոսական տաճարի քանդակների թվում կան նաև մարդկային պատկերներ: Դրանք երկու երիտասարդ ատլետներ են, որոնց բարձրաքանդակները տեղավորված են տաճարի աստիճաններից աջ և ձախ բարձրացող պատերի ճակատին: Դժբախտաբար այդ քանդակների գլուխները դեռևս հնում ջարդել, եղծել են, իսկ տեղի անհարմարության պատճառով, նրանց ոտքերի համամասնությունները խախտված են: Այնուամենայնիվ, նրանց մարմինների ընդգծված պատկերը դրական վկայություն է այդ քանդակների արվեստի մասին:

Գառնիի տաճարը Հին Հայաստանի հելլենիստական բնույթի միակ քանդակազարդ շենքը չէ, նման շենքեր եղել են Արտաշատում, Վաղարշապատում և այլուր: Դրա վկայությունն կարող է այն, որ 618 թ. Վաղարշապատում կառուցված Հռիփսիմեի տաճարի ներսում 1958 թ. գտնվեցին Գառնիի քանդակներին միանգամայն նման քանդակներով զարդարված քիվի երեք քար, որոնք վերցվելով ինչ-որ հին շենքի ավերակներից, երեսն ի վայր դրվել են քրիստոնեական տաճարի որմնամույթերի հիմքերում: